Հայ գրականություն, Արձակ, Հեքիաթ

9+

Նար-Դոս

Աստված և թագավորը

Հին ժամանակներում ապրում էր մի բարի թագավոր: Սա սովորություն ուներ ամեն երեկո հասարակ մարդու հագուստով պտտվել քաղաքի փողոցները, որ իր աչքով տեսնի, թե ինչպես է ապրում իր ժողովուրդը:

Մի երեկո քաղաքի ետ ընկած թաղը պտտվելիս տեսավ մի աղքատ մարդ, որ իր խրճիթի դռան առաջ չոքած՝ աղոթք էր անում և աղոթքի մեջ ասում.

— Տեր աստված, տուր ինձ հարյուր ոսկի. տեր աստված, տուր ինձ հարյուր ոսկի:

Թագավորը լսեց ու անցավ: Մի քիչ որ անցավ, տեսավ մի ուրիշ աղքատ մա՛րդ: Սա էլ չոքած իր խրճիթի առաջ՝ մրմնջում էր աղքատի պես.

— Տեր թագավոր, տուր ինձ հարյուր ոսկի, տեր թագավոր, տուր ինձ հարյուր ոսկի:

Թագավորը սրա խոսքն էլ լսեց ու անցավ:

«Այն առաջին աղքատը, որ աստծու անունն էր տալիս, հիմար մարդ է,— ասաց նա ինքն իրեն,— որովհետև աստծուն փող ո՞վ է տվել, որ նա էլ այդ հիմարին տա: Իսկ մյուս աղքատը, որ թագավորի անունը տվեց, խելոք մարդ է, որովհետև գիտե, որ թագավորն ամենից շատ փող ունի և ուզողին կարող է տալ»:

Հետևյալ օրը թագավորը հրամայեց մի մեծ սինու վրա հարյուր ոսկի դնել, ոսկին ծածկել փլավի տակ և ուղարկել այն աղքատին, որ թագավորից հարյուր ոսկի էր խնդրում:

«Այն հիմարին էլ թող աստված տա»,— մտածեց թագավորը երկրորդ աղքատի մասին, ինքն իրեն ծիծաղելով:

Թագավորի հրամանը կատարվեց. հարյուր ոսկին, փլավը վրեն գլուխ արած, սինով տարան դրին թագավորի անունը տվող աղքատի առաջ:

— Թագավորն ուղարկեց, անուշ արա,— ասացին թագավորի ծառաներն ու վերադարձան:

Նույն օրն երեկոյան թագավորը նորից դուրս եկավ պալատից, որ տեսնի, թե հիմա ինչ է ասում այն աղքատը, որին ուղարկել էր հարյուր ոսկին:Աղքատը նորից չոքած էր իր խրճիթի առաջ և ասում էր նույնը՝

— Տեր թագավոր, տուր ինձ հարյուր ոսկի, տեր թագավոր, տուր ինձ հարյուր ոսկի:

Թագավորն այս որ լսեց, շատ զարմացավ:

Մոտեցավ աղքատին և հարցրեց.

— Այ մարդ, թագավորից այսօր քեզ համար փլավ չբերի՞ն:

— Բերին, շնորհակալ եմ:

— Կերա՞ր:

— Կերա:

— Ի՞նչ կար մեջը:

— Նուշ ու քիշմիշ:

— Ուրի՞շ:

— Խորոված գառան միս:

— Ուրիշ ոչի՞նչ:

— Ուրիշ ի՞նչ պետք է լիներ:

— Բոլորը կերա՞ր:

— Չէ, շատ էր:

— Մնացածը ի՞նչ արիր:

— Մի աղքատ հարևան ունեմ, ինձ պես աղքատ ու քաղցած. տարա տվի նրան, որ ուտի կշտանա:

Թագավորը մատը կծեց ու հեռացավ:

Երբ որ մոտեցավ երկրորդ աղքատի դռանը, տեսավ, որ նա երեկվա պես չոքած էր և այս անգամ աղոթքի մեջ այսպես է ասում.

— Տեր աստված, շնորհակալ եմ, որ լսեցիր աղոթքս և հարյուր ոսկի տվիր ինձ:

Թագավորն այս որ լսեց, սուս արավ ու հեռացավ:

Նա համոզվեց, որ խելոքն այս աղքատն էր, որ դիմել էր աստծուն և ոչ թագավորին:

1901